

- 40 Առհասարակ ցեղ թաթարին,
Ժառանգաւորք Սըմըրդընդին,
Աւտար որդիքն Աբրահամին —
Միահազոյն յաշխարհս մըտին,
Յաթոռս Ատըրպատականին,
- 45 Առին աւար և գերեցին
Զազգս Պարսից և Հայ զարմին:
Տապալեցին, յատակեցին,
Անխայաբար խոցոտեցին,
Զսուրս սրոյ ճարակ տուին
- 50 Եւ ըզկանայսն գերեցին.
Զոմանց գլուխսըն քերթէին,
Հանդերձ հերաւքն խըլէին,
Զայլոց զշունչսն արգելուին
Եւ հեղձամահըս խեղդէին.
- 55 Որպէս զոշխարըս մորթէին,
Փոկս ի թիկանցն հանէին.
Զկէսըս հըրով խորովէին
Եւ ճենճերովքըն ցնծային.
Շատք գէրիստոս ուրանային,
- 60 Եւ ըզՄահմետ դաւանէին,
Եւ ընք գաւառ Այրարա՛նին
Մըտին յաշխարհըն յԱզլանին.
Զարքայանխտ քաղաքն առին,